

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2020 թվականի սեպտեմբերի 14-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 8-րդ Բ դասարանի ծնողական ժողովը՝ ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Արևիկ Մուրադյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Covid -19-ի պայմաններում նոր ուսումնական տարին սկսելու պահանջները:
2. Դասարանի ծնողական խորհրդի՝ նախագահի և անդամների ընտրություն:
3. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին. - «Covid -19-ի պայմաններում նոր ուսումնական տարին սկսելու պահանջները» հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Արևիկ Մուրադյանը: Իր խոսքում դասղեկ Արևիկ Մուրադյանը նշեց, որ այս ուսումնական տարին միանգամայն տարբերվում է նախորդ ուսումնական տարիներից նրանով, որ, համաձայն Covid-19 ուղեցույցի, աշակերտները դպրոց են հաճախելու խմբերով՝ յուրաքանչյուր խումբը շաբաթական 3 անգամ, պետք է խստագույնս հետևեն հակահամաճարակային կանոնների պահպանմանը, նախապես ջերմաչափվեն տանը, դպրոց ներկայանան դիմակով, հաճախ օգտվեն դպրոցում առկա ձեռքերի ախտահանման միջոցներից, պահպանեն 1,5-2 մետր սոցիալական հեռավորություն: Նա ասաց, որ դասարանում արդեն սեղան, աթոռները դասավորված են ըստ ուղեցույցի պահանջների:

Որոշեցին. - Աշակերտներին իրազեկել հակահամաճարակային կանոնների պահպանման վերաբերյալ, հետևողական լինել դրանց պահպանմանը, օգնել դասղեկին այս բարդ և պատասխանատու գործում :

2. Լսեցին. - Դասարանի ծնողական խորհրդի՝ նախագահի և անդամների ընտրության հարցը:

Դասղեկ Արևիկ Մուրադյանը նախ շնորհավորեց բոլոր ծնողներին նոր ուսումնական տարվա կապակցությամբ, նա նշեց նաև, որ նոր ուսումնական տարում ձևավորելու են նոր ծնողական խորհուրդ՝ նախագահ և անդամներ: Ծնողական խորհուրդն ունի իր կարևոր դերն ու նշանակությունը դպրոցում կազմակերպվող ցանկացած աշխատանքներում:

Ընտրվեց ծնողական խորհուրդ հետևյալ կազմով՝

1. Ավագյան Հրանուշ
2. Աբրահամյան Տաթևիկ
3. Բաբայան Տաթևիկ
4. Մաթևոսյան Հայարփի
5. Սարգսյան Կարինե

Ակտիվ քվեարկության արդյունքում ձևողական խորհրդի նախագահ ընտրվեց:

Որոշեցին.- Բարեխղճորեն կատարել իրենց վստահված գործը, օգնել դասղեկին:

3. Լսեցին.- Ընթացիկ հարցեր/դասացուցակ, ուեժիմ/:

Դասղեկը նշեց, որ նոր ուսումնական տարում դասերը սկսվելու են ժամը 9⁰⁰-ին, ավարտվելու են 13⁵⁵-ին (դասամիջոցները կրճատվել են), աշակերտները դասամիջոցներին տեղաշարժվելու իրավունք չունեն: Ուսուցումը վեցօրյա է:

Դասղեկը հորդորեց ձևողներին հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հետևել, որ աշակերտները դպրոց հաճախեն ճիշտ ժամանակին, նախապես ջերմաչափված, պաշտպանիչ դիմակով, անհրաժեշտ պարագաներով, աշակերտավայել կեցվածքով: Պահպանեն հակահամաճարակային բոլոր կանոնները:

3. Որոշեցին.

Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները դպրոց հաճախեն աշակերտավայել կեցվածքով, լինեն կարգապահ, դասերին պատրաստ, բարեխղճորեն կատարեն իրենց պարտականությունները, հետևեն սանիտարահիգիենիկ վիճակին:

Ժողովի նախագահ  Ավագյան Հրանուշ

Քարտուղար  Աբրահամյան Տաթևիկ